



**Խուճիչ N 9 Նախազգուշացնող ազդանշաններ, հատուկ ազդանշաններ, վազանց**

Շրջադարձի լուսային ցուցիչի բացակայության կամ անսարքության դեպքում ձեռքով տրվող նախազգուշացնող ազդանշանը դադարեցվում է՝

1. Մանևրն սկսելուց անմիջապես առաջ:
2. Մանևրն ավարտելուց անմիջապես հետո:
3. Մանևրը կատարելու ժամանակ:

Երկաթուղային զծանցի վրա տրվող ընդհանուր տազնապի ազդանշան է հանդիսանում ծայնային ազդանշանների հետևյալ համակցությունը՝

1. Երկու երկար և երկու կարծ:
2. Մեկ երկար և երեք կարծ:
3. Երեք երկար և երեք կարծ:
4. Երեք երկար և մեկ կարծ:

Ո՞ր նկարում է վարորդը տալիս ձախ շրջադարձի ազդանշան:

1                      2                      3

Կարմիր գույնի առկայծող փարոսիկ միացրած, կանգնած վիճակում գտնվող տրանսպորտային միջոցին մոտենալիս՝ տվյալ ուղղությամբ երթևեկող տրանսպորտային միջոցների վարորդները պետք է՝

1. Կանգ առնեն և շարունակեն երթևեկությունը միայն թույլտվություն ստանալուց հետո:
2. Իջեցնեն արագությունը, որպեսզի անհրաժեշտության դեպքում հնարավորություն ունենան անմիջապես կանգ առնել:


Տրանսպորտային միջոցների վրա ի՞նչ նպատակով են տեղադրված նարնջագույն կամ դեղին գույնի առկայծող փարոսիկներ:

1. Երթևեկության մյուս մասնակիցների նկատմամբ երթևեկության առավելություն ստանալու համար:
2. Երթևեկության մյուս մասնակիցներին վտանգի մասին նախազգուշացնելու համար:

Կապույտ գույնի առկայծող փարոսիկ և հատուկ ծայնային ազդանշան միացրած տրանսպորտային միջոց մոտենալու դեպքում վարորդները պետք է՝

1. Զիջեն ճանապարհը՝ նշված տրանսպորտային միջոցի անխոչընդոտ անցումն ապահովելու համար:
2. Իջեցնեն արագությունը և զիջեն ճանապարհը՝ նշված տրանսպորտային միջոցի անխոչընդոտ անցումն ապահովելու համար:

Կապույտ ավտոմոբիլը խաչմերուկը կանցնի՝




1. Առաջինը՝ կարմիրի հետ միաժամանակ:
2. Երկրորդը՝ կարմիրի հետ միաժամանակ:
3. Երրորդը՝ կարմիրի հետ միաժամանակ:

Կապույտ և կարմիր գույների առկայծող փարոսիկներ և հատուկ ձայնային ազդանշան միացրած տրանսպորտային միջոց մոտենալու դեպքում վարորդները պետք է՝


1. Ջիջեն ճանապարհը՝ նշված տրանսպորտային միջոցի անխոչընդոտ անցումն ապահովելու համար:
2. Իջեցնեն արագությունը և զիջեն ճանապարհը՝ նշված, ինչպես նաև դրանով ուղեկցվող տրանսպորտային միջոցների անխոչընդոտ անցումն ապահովելու համար:

Ո՞ր տրանսպորտային միջոցի վարորդն ունի առաջնահերթ երթևեկության իրավունք:



1. Ճանապարհային մեքենայի վարորդը:
2. Թեթև մարդատար ավտոմոբիլի վարորդը:

Սև ավտոմոբիլը խաչմերուկը կանցնի՝




1. Առաջինը:
2. Երկրորդը:
3. Վերջինը:

Ո՞ր տրանսպորտային միջոցի վարորդը պետք է զիջի ճանապարհը:



1. Շտապ օգնության ավտոմոբիլի վարորդը:
2. Թեթև մարդատար ավտոմոբիլի վարորդը:

Կապույտ ավտոմոբիլը խաչմերուկը կանցնի՝



1. Առաջինը:
2. Երկրորդը:
3. Երրորդը:
4. Վերջինը:

**Խումբ N 9 Նախազգուշացնող ազդանշաններ, հատուկ ազդանշաններ, վազանց**

Տալիս է արդյոք երթևեկության առավելություն տրանսպորտային միջոցի վրա միացված դեղին գույնի (նարնջագույն) առկայծող փարոսիկը:

1. Տալիս է:  
2. Չի տալիս:

Լուսնասպիտակ գույնի առկայծող փարոսիկները միացրած տրանսպորտային միջոցի վարորդը տալիս է հատուկ ծայնային ազդանշան, որպեսզի

1. Ստանա երթևեկության առավելություն երթևեկության այլ մասնակիցների նկատմամբ:  
2. Ոստիկանության ծառայողների և այլ անձանց ուշադրությունը գրավելու համար:

Կապույտ գույնի առկայծող փարոսիկով կահավորված տրանսպորտային միջոցի վարորդը երթևեկության մյուս մասնակիցների նկատմամբ առավելություն ունի, եթե՝

1. Միացրել է առկայծող փարոսիկը:  
2. Հատուկ ծայնային ազդանշան է տալիս:  
3. Միացրել է կապույտ գույնի առկայծող փարոսիկը և հատուկ ծայնային ազդանշանը:

Ի՞նչ տարածության վրա է արգելվում վազանցը մինչև երկաթուղային գծանցը:

1. Մինչև 50 մ առաջ:  
2. Մինչև 100 մ առաջ:  
3. Մինչև 150 մ առաջ:

Թույլատրվո՞ւմ է արդյոք խաչմերուկում կատարել տրանսպորտային միջոցների վազանց՝ հատվողի նկատմամբ գլխավոր համարվող ճանապարհի վրա:

1. Թույլատրվում է:  
2. Արգելվում է:

Թույլատրվո՞ւմ է արդյոք թեթև մարդատար ավտոմոբիլի վարորդին վազանց կատարել նշված իրադրությունում:



1. Թույլատրվում է:  
2. Թույլատրվում է, եթե մոտոցիկլի արագությունը չի գերազանցում 30 կմ/ժ:  
3. Արգելվում է:

Վազանցն արգելվում է՝

1. Խաչմերուկներում:
2. Երկաթուղային զծանցներից 150 մ առաջ:
3. Երկու դեպքում էլ:

Վազանցն արգելվում է՝


1. Կարգավորվող խաչմերուկներում:
2. Չկարգավորվող խաչմերուկներում:
3. Երկու դեպքում էլ:

Թույլատրվում է արդյոք վազանցել ավտոգնացքը տվյալ իրադրությունում, եթե դրա արագությունը չի գերազանցում 30 կմ/ժ:




1. Արգելվում է:
2. Թույլատրվում է:

Թույլատրվում է արդյոք կանաչ ավտոմոբիլի վարորդին վազանց կատարել:



1. Թույլատրվում է:
2. Արգելվում է:
3. Թույլատրվում է, եթե կարմիր ավտոմոբիլը երթևեկում է 30 կմ/ժ ավելի փոքր արագությամբ:

Թույլատրվում է արդյոք կարմիր ավտոմոբիլի վարորդին վազանց կատարել տվյալ իրադրությունում:



1. Թույլատրվում է:
2. Արգելվում է:
3. Թույլատրվում է, եթե վազանցվող ավտոմոբիլի արագությունը չի գերազանցում 30 կմ/ժ:

Թույլատրվում է արդյոք նշված տեղում վազանցել ավտոբուսը:



1. Թույլատրվում է:
2. Արգելվում է:

Տրանսպորտային միջոցների վազանց նշանակում է՝

1. Շարժման մեջ գտնվող մեկ կամ մի քանի տրանսպորտային միջոցից առաջ անցնելը՝ կապված զբաղեցրած գոտուց հանդիպակաց երթևեկության գոտի դուրս գալու հետ:
2. Շարժման մեջ գտնվող մեկ կամ մի քանի տրանսպորտային միջոցից առաջ անցնելը՝ կապված զբաղեցրած գոտուց դուրս գալու հետ: